


# ԱՐԱՐԱՏ

ամսագիր

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԹԻՒ Թ․ ՅՈՒՆՈՒԱՐ 1870 Բ․ ՏԱՐԻ


## ԿԱՐԵՒՈՐ ԳԻՏՈՂՈՒԹԻՒՆ

ԵՒ

## 1870 ՆՈՐ ՏԱՐԻ

Հարկերը կամ կարօտութիւնները կ՚ծնանին պէտքերը․ պէտքերը կը ծորդուին խորհրդոց և կամաց հետ․ կամք և խորհուրդք կը հետեւին նպատակաց․ նպատակք առանց գործոց ոչինչ և անպետք են․ գործք առանց կարելութեանց և փորձոց զուր և ապարդիւն են․ իսկ կարելութիւնք և փորձք են ժամանակի գործք, զորս ձեռք բերելոյ ու արգասաւորելոյ համար՝ բնականաբար՝ թէ շատ և թէ սակաւ միջոցի ու համբերութեան կ՚կարօտի։ Այսպիսի ենթադրութիւնք անցելոյն հետեւութիւններէն կը գոյանան, զորս անցեալէն կընդունի և կը յառաջացնէ ներկայն․ իսկ ապառնին նոցա արդիւնքը կ՚արտադրէ և նպատակները կը պսակէ։

Մարդկային սերունդը ենթարկուած է

այսպիսի դրութեան, որ բազմակերպ ընկերութեանց և ցեղից բաժանուած, իւրաքանչիւրը կ'զգայ իւր առանձին հարկն ու պէտքերը, կը յղանայ և կ'ընտրէ խորհուրդներ, կ'որոշէ նպատակ, կը փութայ զայն գործով արդիւնաւորել, կ'ենթարկէ փորձոյ, և վերջապէս՝ համբերութեամբ և անընդհատ և անձանձրոյթ ջանիւք վայելել կը յաջողի արդիւնք: Բնականաբար անհնար է որպիսի և իցէ թէ՛ ընդհանուր և թէ՛ մասնաւոր նպատակի յղացման հետ 'ի միասին՝ անդէն անդ կատարելագործել, մանաւանդ շատ անգամ և շատ պարագայից մէջ՝ նախորդը կը յղանայ և կ'սկսանի և յանձնելով յաջորդին, յաջորդը կը շարունակէ, և ուրուրեմն յաջողութեամբ կամ ընդներհակն կ'արդիւնաւորէ:

Պարզեմք մեր նպատակը:

Մեք Հայերս և մարդկային սերունդին մէջ առանձին մի ընկերութիւն կամ Ազգ կը կազմեմք, և անշուշտ ունեցած եմք կամ կ'ունենամք և ինչպէս ունիմք բոտ մեզ հարկ կամ կարօտութիւն ու պէտքեր, և անցեալ հին ժամանակները կը թողումք այսքան միայն յիշատակելով, որ «ընդ հուր և ընդ ջուր» անցած և մեզ վերջապէս աւանդեալ ունիմք Աղքատութիւն, Ազգն և Լեզու զանազան յիշատակներով: Իսկ զայնս ներկային մէջ դարմանելոյ, յառաջ զարգացնելոյ և երբեմն առաւելապէս փառաւորելոյ բազմաօրէ անկկալութեամբք՝ ենթարկուած եմք նաև այնպիսի կարօտութեանց և անհրաժեշտ պարտաւորութեանց, զորս անցելոյ բարի և վատթար դիպաց հետ բաղդատելով փորձառութեանց ուղիղ կշռոց մէջ, արժան է քաղել մեզ այնպիսի խրատներ և օրինակներ՝ վնասակարէն զգուշանալոյ և օգտակարին հետևելոյ համար, որպէս զի ժամանակիս հարցերը՝ որք և կը ծնանին ամենակարևոր պէտքերը, կարողանան յաջողել խոյս տալով 'ի փորձանաց և նկրտիլ բարենպատակ ապառնւոյ:

Ժամանակիս հարկեր ու պիտոյքներ և բարենպատակ սկզբունք անշուշտ առանց պատճառի չզգացուած և զգալի լինին: Ուստի այն հարկերը՝ որ զմեզ ոգևորած են, և այն նպատակները՝ որ զմեզ սիրալիր և խանդակաթ համակրութեամբ գրաւած են, որքան որ փոքր և չնչին հետևութեանց ենթարկուած լինին, այնքան նշանաւոր և արդիւնաւէտ կարեն հանդիսանալ. և որոց պատճառը եթէ չար է, բնաջինջ կ'անհետանայ, իսկ եթէ բարի է, իրականութեան կը փոխուի:

Արդ, ի՞նչ են ուրեմն զմեզ տագնապող այժմեան հարցերն: — Տգիտութիւնը և մանաւանդ կորստեան վտանգը: — Ի՞նչ են պէտքերը: — Լուսաւորութիւն և դաստիարակութիւն: — Ի՞նչ խորհրդով: — Խաղաղ ջնջել տգիտութիւնը և նորա աժգալի հետևանքները: — Ի՞նչ է վերջին նպատակ: — Յառաջադիմութիւն և բարի ապագան:

Այն անցեալը՝ որ երբեմն մեր նախնեաց փառք և երջանկութիւն կը ձօնէին, և՛ այն անցեալը՝ որ տակաւին կը տառապեցնէ զմեզ այլ և այլ թշուառութեանց խորտակուած, ոչ առաջինը կարեմք վերակենդանացնել, և ոչ վերջինը կը յաջողեմք անհետացնել՝ ցորչափ դաստիարակութիւնը, լուսաւորութիւնը և յառաջադիմութիւնը չզարգացնեմք ամենայն ուրեք համայն մեր սիրելի Ազգայնոց մէջ:

Ստոյգ է, եթէ մեր յառաջակայ վտանգը կրկին չըլլէր և միայն տգիտութիւնը ըլլար, յանժամ առաւել դժուարութիւն չպիտի կրէինք: Բայց նաև անուրանալի է,

զի յառաջակայ փառնգին և թշուառու-թեան կարապետ և շուրջ յորդորողն գը-խաւորապէս աղքատութիւնն է, որ է մայր օտարանալութեանց, երկպառակութեանց, կռուակցութեանց; ատելութեանց, կործան-մանց և ամենայն չարեաց: Ուստի քննմամբ աղքատութեան, թէև ոչ խափան կ'անհետանայ փառնգն, բայց գէթ՝ չզխոէ, եթէ զօրաւոր և անյաղթելի ախոյեան կը հանդիսանայ լու-սաւորութիւնը նորա դէմ. ընտրում՝ ուր լոյս է, անդ խաւարը անկարող է մնալ. ուր արեւը պայծառ կը շողշողէ, անդ՝ անձրեւը չէ կարող տեւել և մառախուղ հոսանք դոյս-ցնել, ամպերը կայծակնացայտել և այլն:

Բան զայս առաւել կարեւոր և զօրաւոր մանաւանդ յարմար ուրիշ միջոց չ'կարենք կամ չունինք գտանել նկատմամբ մեր Ազգի յառաջադիմութեան և բարեկրթութեան, երբ անցեալ դարերը երեւակայած կը բաղդա-տենք ներկայ դարուս հետ:

Այնպիսին լուսաւորութիւն բացագանչե-լով ի՞նչ օգուտ, վերացեալ գաղափարի զուր արտայայտութենէ զատ. ոչինչ օգուտ չունինք. պէտք է խնամել նախ նորա մի-ջոցները և գործադրել իրականապէս ամե-նայն տեղ: Պէտք է նա և յարատեւել, և ոչ մի ժամ և ոչ մի րոպէ թոյլատրելու չ'զիջանիլ 'ի զուր կորնչելու: Արդ հետեւ ինչպէս ան-ցեալի ամեն րոպէները մէն մի նշանակու-թիւններ կ'ըրած են մեր Ազգի համար. նոյն-պէս ներկայիս իւրաքանչիւր րոպէները ապագայի համար կամ աւետաբեր և կամ դու-ժարեր վճիռներ կը տնօրինեն, կամ Աւետեաց և կամ Սոդոմ—Գոմորեան երկիրը դառ-նանցելու: Որք արդարեւ մէն մի հանելուկ-ներ կը ձեւացունեն, զորս ազ—գա—յի—նը կամ ծա—ռը—յի—նը կը յաջողի լուծել և բա-ցատրել ապառնոյ մէջ:

Ուստի մեր այժմեան նկատելու ամենա-կարեւոր կենսական անհրաժեշտ խնդիրը՝ այս պէտք է լինի, որպէսզի բարեկիրթ և լուսա-ւորեալ ազգաց յառաջադիմութեան հասա-նինք, ուսմանց, արհեստից, վաճառականու-թեան եւ ամեն գիտութեանց մէջ. բոլորովին եւ չ'մնամք ամենէն աղքատութեան խաւա-րին մէջ թաւթափելով:

Երջանաց սաւերանման պատրանքու-պարըշաւ բոլորուածքէն այն ժամանակ մեք կարող եմք ճշմարտապէս ուրախանալ, երբ կը տեսնենք, որ մեր Ազգի անհրաժեշտ պի-տոյքները օր քան զօր կը պատրաստուին, ամեն կողմ հայթայթուած կը գործադրուին. և մեք համարձակ կ'ասենք, եթէ կը զարգա-նամք և կը յառաջադիմեմք եւս և կը մերձե-նամք բարի և օգտաւէտ ապառնոյ:

Ուստի մեզ կը մնայ ներկայէն և ապառ-նոյն համար ոգեւորուած և գրաւուած խանդակաթ սիրով գործադրել ինչ որ կա-րեւոր է, ինչ որ բարի և ազգօգուտ է. այս-թէ ոչ, երեւակայելով անցեալէն լոկ մեր նախ-նեաց բաղձալի երջանիկ օրերը, և ընդ-հակառակն՝ անթիւ և անհամար տառապա-նաց և նեղութեանց ժամերը, կարող չեմք զմեզ խուսափեցնել այն անդունդէն, որ ժամանակաց թաւալգլոր դառնալովը կը-սպառնայ կլանել, և ժառանգել տալ մեր սերնդոց այնպիսի ապառնի, յորում եր-ջանիկ կեանք և անդորրութիւն կը դուշակ-ուէին: Չեմք կարող մեք ուրանալ և չը խոս-տովանիլ, որ նախնիք մեզ աւանդեցին ինչ որ այժմ ունիմք, աւանդեցին մանաւանդ բարի և չար օրինակներ, յորոց փորձ հե-տեւութիւնք ընտրած և ընդունած, մեզ իսկ ըրբոզան պարտք է ներկային մէջ գործել ըստ արժանւոյն:

Անցեալը միշտ իւր գործողութիւնը կը

կատարէ. ներկային կը մնայ նոյա ընտրութիւն և շարունակութիւն կամ վերջ տալը։ Վերջապէս անցեալէն սոյդ պէտք է ուսած ըլլինք, որ մեր Ազգի համար անմիաբանութիւնը և անտարբերութիւնը ի՛նչ վտանգ պատճառած է և կը պատճառէ, և թէ ցարդ ի՛նչպէս կորուսած ենք խուսափիլ և յետոյ ի՛նչպէս կրնանք զերծանիլ և որպիսի՞ միջոցներով։ Ա՛հ կը կրնանք և կ'ընենք, որ՝ անշուշտ ազգային կրթութեան և լուսաւորութեան ընդհանուր տարածմամբ, որով Ազգային միութիւն և ամբողջութիւն և իրական յառաջադիմութիւն կ'արտադրուի անտարակոյս։

Ահ երբե՛ք խօսուինք չը պիտի ունենանք տրտնջալու և գանգատելու այսինչ կամ այնինչ անձէն և կամ ընկերութիւնէն, եթէ մեղ մօտ կը պակսի (թէ և հակառակ մարդասիրական փափաքելոց). որովհետև նա ևս ունի առանձին ցեղական եռանդ և զգացմունք և հանդարտ խիղճ այդպէս ջանալու. բայց յայնժամ ամօթ է մեզ և նախատինք, երբ մեք ինք մեր պարտաւորութիւնք և եռանդներ չզգալով անտարբեր կը կենանք. և առանց գործելու և ջանալու երեւակայական մտօք և վերացական նպատակներ կ'երազենք. այո՛, նախնական իմն պարտք է մեզ ևս ի՛նչ որ արժան և անհրաժեշտ է, գործել ի մեր Եկեղեցւոյ մերոյ սրբոյ և Ազգի։

Զայս ընդունելով անցեալէն փորձառութեամբ մանաւանդ և ներկայն կը պահանջէ զայն, ուստի ասոր համար պիտի գործենք փորձառութեամբ ներկային մէջ։ Ու ինչ որ անցեալին մէջ ձեռնարկուած է մեր Ազգի նկատմամբ՝ անձնանուէր Ազգայնոց շնորհիւ, առանց սնոտի բծախնդրութեան, առանց անօգուտ վէճից և կուսակցութեանց, առանց կրօնական խնդիրներ յուզելու և զազգ պառակտելու, առանց օտարից օգտին ծառայելու, առանց անձնականը քան զԱզգին օգուտ նախադասելու՝ շարունակենք նոր ներկայի մէջ՝ ջանալ և գործել Ազգի և Եկեղեցւոյ ապագայի անձկանօք։ Հոգանք և աշխատինք ամենայն տեղ երկսեռ ուսումնարաններ ունենալ հիմնաւոր եղանակօք և կանոնօք բարեկարգուած. որովք՝ ուսումը, գիտութիւնը, լուսաւորութիւնը և կրթութիւնը կ'ընդհանրանայ մեր Ազգայնոց մէջ։ Ու այսպիսի անձկանօք և նպատակօք պիտի դիմենք և մտնենք նոր տարիներ, զոր և պիտի սիրենք շնորհաւորել բարեմաղթելով միմեանց, ինչպէս և Արարատ այսպիսի բաղձանօք և ակնկալութեամբ կը շնորհաւորէ և կը բարեմաղթէ իւր հարազատ և սիրելի որդւոց համար՝ ներկայ 1870 նոր տարւոյ մուտքը, խնդրելով միանգամայն՝ զի իւր հարազատ և սիրեցեալ որդիք բարեհաճին ամեն Ազգօգուտ յօդուածոց սիրալիր ընդունելութեան և բարի բարի գործոց և ձեռնարկութեանց նախանձիլ և հետևիլ խանդակաթ։ Ա.

---

Շնորհաւոր թող նոր տարի, Արարատ.
Նոր լուսաւորեալ զեփիւռն ծաղկէր դաշտ։

Ողջո՛յն քեզ, քա՛ջդ Արարատ, ողջո՛յն Նոյեան Տապանիդ.
Դարձո՛ք ողջամբ 'ի քո տուն՝ յօտար ուղւոյդ բաղմամբերդ.
Շրջանդ աւեղին, գիտէ՞ս դու, չափնաց Արփին ոսկեհեր,
Նորոգ եկ ձեռնամուխ քնքուշ մատամբք լուսաբեր։